

Վ. Գ. ՍՎԱԶԼՅԱՆ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱՔՆԵՐ

(Վաճ-Վասպուրական), Բ. 15, Ե., 1998, ՀՀ ԳԱԱ ԵՐԱՄ., 512 էջ:

Տասնչորս տարվա ընդմիջումից հետո լույս ընծայվեց «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական, ակադեմիական մատենաշարի 15-րդ հատորը, որն ընդգրկում է Վաճ-Վասպուրականի հեքիաթները: Հատորը կազմել է հրատարակության է պատրաստել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջավոր գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Վերթինե Սվազլյանը: Հատորում ընդգրկված են Վաճ գավառի լամաղկերտ, Արարի թաղ, Հայոց ձորի, Խառականց, Նոր գեղի, Կանգվառ, Կինդանաց բնակավայրերի հեքիաթները: Հեքիաթների բնագրերը գրի են առել 1915—1916 թթ. անվանի ազգագրագետ, բանահավաք Երվանդ Պեղազյանը, Արտաշես Բարսեղյանը, Նղիշ Վարդանյանը, Սենեքերիմ Շալճյանը, Շահեն Կուժիկյանը:

Հատորում տեղ գտած թվով 82 հեքիաթները գրավել են 1915 թ. Մեծ եղեռնից մազապուրծ, ինչպես Ս. Էջմիածնի Մայր տաճարի պատերի տակ, այնպես և Հայաստանի ու Վրաստանի տարրեր շրջաններում ապաստանած, վանեցիներին: Գրառումները կատարվել են դժվարին պայմաններում, գրառողներից ոմանք նույնիսկ զոհ են գնացել այն ժամանակ գաղթականների շրջանում բռնկված տիֆի համաճարակին: Վաճ-Վասպուրականի հեքիաթների հրատարակությունը վերահիշյալ հատորով չի սահմանափակվում, այն ընդգրկված է նաև երկու՝ 14-րդ՝ Ա. Ղազիյանի և 16-րդ՝ Ա. Նազիյանի աշխատասիրությամբ կազմված հատորներում, որոնք ևս սպասում են իրենց հովանավորներին:

Հատորի լույս ընծայումը Վերթինե Սվազլյանից պահանջում էր համառկամք, քրտնաջան աշխատանք, ուժերի մեծ գերաբեկում, հայ ազգասեր բարեգործներին մշակութային խնդիրների շուրջ համախմբելու կարողությունները:

Վերահիշյալ ստվար ու շքեղ հատորի առաջին էջերում, ի նշան երախտագիտության, Վ. Սվազլյանը զետեղել է բարեշնորհ հովանավորների անունները: Սույն հատորը հրատարակվել է ԱՄՆ-ի արևելյան և Կանադայի Կիլիկյան թեմի առաջնորդ, բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճյանի հովանավորությամբ, տեղ և տիկին Արթուր և Պոյանա Գրիգորյանների մեկենասությամբ՝ ի հիշատակ Սարգիս Գրիգորյանի: Հատորի սկզբնական համակարգչային աշխատանքներին աջակցել է պոլսահայ ազգային՝ Տիգրան Ալթունը:

Հաշվի առնելով ներկայացվող նյութերի սկզբնաղբյուրային, բնագրային արժեքը, Վ. Սվազլյանը հատորը կազմելիս առաջնորդվել է մշակված ու համակարգված գիտական սկզբունքներով: Հատորում հիմնականում ընդգրկվել են բովանդակային առումով իրենց ամբողջականությունը պահպանած հեքիաթները: Հավատարիմ մնալով հեքիաթասացի բանավոր խոսքին՝ բնագրերում կազմողի կողմից կատարվել է ուղղում կամ խմբագրում միայն այն բացառիկ դեպքերում, երբ անցյալի բանահավաքները հետևողականորեն չեն սահմանել հեքիաթների լեզվի հնչյունական ու քերականական նրբերանգները, երբեմն թույլ են տվել զուգաձև գրություններ: Վ. Սվազլյանը, բնագրերը հրատարակության պատրաստելիս, գրության միօրինակությունը պահպանելու համար, զուգաձևերից ընտրել է տվյալ բարբառին ամենաբնորոշն ու ինքնատիպը: Բանավոր խոսքի նրբերանգները, բնագրերի գեղաըմբստական բովանդակությունը ճիշտ րեկալելու նպատակով, նա կարգուկանոնի է ենթարկել ուղղագրությունը, որոշակի է դարձրել ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքի կիրառումը, ուղղել բնագրերում առկա բացահայտ սխալներն ու վրիպումները: Կատարված է բնագրագիտական լուրջ և մանրազնին, քրտնաջան աշխատանք:

Հատորն ունի ծանոթագրությունների բաժին, համադրական աղյուսակներ, որոտեղ, բազմաբնույթ տվյալների օգնությամբ լուսաբանվում է հեքիաթների գրառման պատմությունը: Նշված են յուրաքանչյուր հեքիաթի անվանումը, նրա ծագման հայրենիքը, հեքիաթասացի և զբաղողի անունները: Հատորն ունի նաև բառարան, ուր տրված են հեքիաթներում հանդիպող, շուրջ հազարի հասնող, դժվար հասկանալի բարբառային և փոխառյալ բառերի բացատրությունները: Ահա թե ինչու այս հատորի հրատարակությամբ փրկվել են ոչ միայն Վան-Վասպուրականի գողտրիկ հեքիաթները, այլև վասպուրականցիների ինքնատիպ բարբառը: Վասպուրականի մասին պատմաաշխարհագրական, մշակութային անհրաժեշտ տեղեկությունները տեղադրվել են սույն հատորին նախորդող 14-րդ հատորում:

15-րդ հատորում ընդգրկված հեքիաթներում բանաստեղծական անկրկնելի ձևերի մեջ արտահայտվում են վանեցիներին բնորոշ կենսափիլիսոփայություններ, յուրատիպ աշխարհընկալումը, բարքերի ու կենցաղի յուրահատկությունները, նրանց խոսք ու զրույցի համն ու հոտը: Հատորը ոչ միայն գեղարվեստական հաճույք կպատճառի հայ ընթերցողների ամենալայն շրջաններին, այլև, իբրև հում նյութ, իր սկզբնաղբյուրային արժեքով աջակից կլինի Վան-Վասպուրականի մշակութային խնդիրներով զբաղվողներին:

Վ. Սվազլյանի ջանքերի շնորհիվ լույս ընծայված վերոհիշյալ հատորը Վան-Վասպուրականի անունը հավերժացնող արժեքավոր մի հուշակոթող է:

Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու